ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի՝ Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վարդան Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2017թ. դեկտեմբերի 12-ին

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայության ղեկավար, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նախագահ, Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի նախագահ՝ Վ.Ի. Բուլավին:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 66-րդ և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 25-րդ նիստերին:

6. Քննարկված թեմաները՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 66-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 14 որոշումներ, Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 25-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 24 որոշումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Իրականացվել են երկկողմ հանդիպումներ ԵՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների հետ, քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԱՊՀ մասնակից պետությունների ՄԾՂԽ 66-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 14 որոշումներ՝ մասնավորապես ԱՊՀ անդամ պետությունների մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի և ռեսուրսների տեղեկատվական անվտանգության պահանջների մասին, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայողների համար բարձրագույն կրթության ծրագրերով և լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրերով վերապատրաստման վերաբերյալ և այլն: Մաքսային միության անդամ պետությունների ՄԾՄԿ 25-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 24 որոշումներ՝ մասնավորապես ԵԱՏՄ տարածքով ապրանքների տարանցման ժամանակ երաշխիքային մեխանիզմների վերաբերյալ, այն ապրանքների արտահանման կարգի պարզեցման վերաբերյալ, որոնց նկատմամբ որպես ապրանքի հայտարարագիր օգտագործվել են տրանսպորտային (փոխադրման), առևտրային կամ այլ փաստաթղթեր, ԵԱՏՄ մաքսային տարածքով ապրանքների տարանցման միասնական համակարգի ստեղծմանն ուղղված միջոցների վերաբերյալ, մաքսային արժեքի հսկողության ենթակա ապրանքների կատեգորիայի ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ և այլն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Համաժողովի որոշումները և առաջարկությունները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում: ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի հաջորդ նիստը նախատեսվում է անցկացնել Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքում, իսկ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի հաջորդ նիստը՝ Ղրղզստանի Հանրապետության Բիշքեկ քաղաքում:

10. Գործուղվողը՝

Վարդան Հարությունյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

13.12.2017թ.